

վարձում՝ ֆուրդոններ, գնացողներին նստեցնում և ճանապարհնում։ Այսպիսով տեղական յանձնաժողովը մինչև 1907 թուի մարտի վերջը կարողացել էր բարա վերագրածնել 500—600 հոգի *:

Յեշենք այստեղ, որ մենք թողել ենք Բագլեզում և Քէշեցքեանդում բարացիներից մի մի խումբ, որոնց վիճակի մասն հարկաւոր է տեղեկանալ։ ուստի կրկին վերագրառնանք Բագլիկ :

Նարունակելի

Քաջքերունի.

ԽԱԶԱՏՈՒՐ ԱՐՈՎԵԱՆ

X.

Մինչև այժմ մեղ հետաքրքրում էր, թէ ինչ է Աբովյանի վէպի բովանդակութիւնը և ինչպիսի աշխարհահայեացք ունէին գիւղական կեանքի ներկայացուցիչները։ Այժմ մեղ մնում է պարզաբանել վերջին խնդիրը, այն է, թէ ինչպէս է վերաբերում ինքը հեղինակը վերոյիշեալ երեք հասարակական խմբերին, և որանցից որի կողմն է նրա համակրութիւնը։

Որևէ հեղինակի դէպի մի գասակարգ ունեցած վերաբերմունքը պարզելու համար մեծ նշանակութիւն ունի որոշել, թէ ընդհանրապէս ինչ կողմերով է երեան հանում այս արուեստագէտը այն հասարակական խմբի կեանքը։ Երբ հեղինակը որևէ է դասակարգի կեանք պատկերացնում է ընդհանրապէս գրական կողմերով, այլ ևս կասկած չէ կարող լինել նրա համակրական վերաբերմունքին դէպի այն գասակարգը։ Որքան էլ որ հեղինակը նիւթի մշակութեան ժամանակ նոյն խկ ծայրայեղօրէն հաւատարիմ մնայ օրեկտիւ պատկերացման սկզբունքին, այնուամենայնիւ նիւթի այդպիսի ընտրութիւնը արգէն չէ կարող

* «Մշակ» 1907 թ. № 70 ապրիլի 1.

թագցնելը, որ հեղինակը համակրութիւն է տածում զէպի կեանքի այս շրջանը:

Արդ Արօվեանը, որ զէպի համար նիւթ է ընտրել գիւղական կեանքը, ինչ կողմերով է պատկերացնում այն, դրական թէ բացասական:

Ով գոնէ մի անգամ կարդացել է «Վէրք Հայաստանին» նոյն իսկ թռուցիկ կերպով, չէ կարող կասկածել, որ այդ զէպի գիւղացի հերոսները զանազան բարեմասնութիւններով օժտուած են հանդէս գալիս: Օրինակ՝ Աղասին հնագանդ է, հեղ, հարեաններին օգնող, աղքատասէր, կենսուրախ, իսելօք ու քաջ, թագուհու յատկութիւններն են հրեշտակային անմեղութիւն, կուսական ծայրայեղ ամօթխածութիւն, դարձեալ աղքատասիրութիւն և ծնողասիրութիւն: Քէդխուգաների մասին խօսելիս նկատում է աշխատասէր, հիւրասէր ու առատաձեռն լինելը: Գիւղական կեանքից առած հերոսներից երկուսը՝ Աղասին ու թագուհին՝ նոյն իսկ ծայրայեղ իդէալականացման են ենթարկուած: Աղասու բնաւորութեան նկարագիրը հանրածանօթ է, որովհետև նոյն իսկ դասագրքերում տեղ է գտել, ուստի կարիք չենք համարում մէջ բերելու: Իսկ թագուհու նկարագրութիւնից ահա մի հատուած, որտեղ կարծես մի չնաշխարհիկ էակ է պատկերացուած:

«Մաղկներն էլ, հէնց իմանաս, նրա ոտի ձէնն առնելիս ուրախանում, ցնծում, բացւում վշըչում էին: Ղշերն էլ նրա երեսը տեսնելիս, հէնց բռներ, նոր հոգի էին առնում, գլուխները թևերի տակից բարձրացնում, ճշում, ծլուրլում, թևերին խփում, ծափ տալիս: Զեռը գառան գլուխը քսելիս եա շփելիս, հէնց գիտես, թէ էս անմեղ հայուանն էլ էր իմանում, որ հրեշտակի ձեռք ա իրեն գիպչում և ոչ մարդի: Մի քիչ մօտիցը պակսելիս ձէնը աշխարի էր վերցնում, մարդու սիրտ էրում, էնպէս էր բղդում, քարու քոլ ընկնում: Շատ անգամ նրա փափուկ ծնկան վրայ էր քնում, նրա անուշահոտ, ազիզ ձեռիցն էր խոտ ուտում: Չայիր-չիմանի, մանիշակի վրայ, վարդի, թթենու տակին, եա քչքչան առուի մօտ որ բազի վախտ քնած չէր ըլում,

հէնց իմանաս, երկնքիցը լիս ա վէր եկել, ափնիքը հայլի դպուել . . . Նատ անգամ վարդի փունջը մէկ ձեռին, մանիշակինը մէկէլ, աչքը որ չէր բաց անում, հէնց զիտես, սար, ձոր, ծառ, թուփ, խոտ, ծաղիկ նրան էին մաժմնացել, նրա շունչն ըլէին ուզում, որ քաշեն, ծծեն, զօրանան, դալարին։ Հովը մաղերի վրայ սլսլախս, երեսին դիպչելիս էլ չէր ուզում, որ առաջ խաղաց եա ետ գնայ. հէնց նրա զլիսովն էր պտըտում, հէնց նրա մաղերի հետ խաղում։ Վարդի վրայ երեսը կռացնելիս ուզում էր, որ բարձրանայ, նրա շունչը քաշի, նրա պատկերի գունը գոզանայ, որ գհա աւելի գեղեցիկ, գհա անուշահոտ երեխ Յլրիւլը նրա հոտը առնելիս իր վարդը մոռանում, նրան էր գովում, նրա վրէն էր իր սէրը թափում, նրա հասրաւ թովն էրուում, խորովուում։ Նատ անգամ ինքը ձէն հանելիս, եա ինքն իրան խաղ ասելիս հէնց իմանում էր, թէ հրեշտակներն են իր հետ խօսում, իրան ձէն տալիս, եա ձէնը քաշում։ Առաւոտեան ցողը, իրիկուան վերջի լիսը՝ մէկը նրան տեսնելիս ցնծալով վեր էր գալիս, որ նրա սուրբ երեսին նստի, մէկը ցաւելով երեսն իրան էր քաշում, աչքը խփում, որ նա շուտով քոն մտնի, գիշերն անց կենայ, որ առաւօտն էլի գայ, նրա տեսութեան արժանանայ, նրա լուսովը հոգի առնի ու զուարճանայ։ Քունը նրա աչքերին էնալէս էր մօտանում, ինչպէս մէկ սրիի երկնային հրեշտակը։ Թիւերն երեսին փռում, անմահական երազով նրան դրկում, արթնացնում, էլ ետ իւր գիրկը դնում*։

Արովեանը այսպէս հիացած է ոչ միայն գիւղի ներկայացուցիչներով, այլ և նրանց տնտեսութեամբ։ Այստեղ էլ նկարագրութիւնը նա այնպէս է տանում, որ համարեամեն քայլափոխում զգացուում է, որ նրա դրածը ոչ թէ օրիեկտիւ նկարագրութիւն է, այլ «ի խորոց սրտի» փառաբանութիւն։ Ընթերցողի մաքից բոլոր կասկածները փարատելու համար մէջ ենք բերում գիւղական տնտե-

*) «Ա. էրբ Հայաստանի», եր. 65—67.

սութեան, լիութեան ու ընտանեկան կեանքին վերաբերեալ էջերից մի քանի հատուածներ։ Առանձին ուշագրութեան արժանի է նկարագրելու եղանակը։

«Տունն ու շիրախանէն հազար բարութիւնով լիքը տրաքում էին ու Աստուծոյ հոգի կար մէջըներում։... Գիշեանին կարաօներով շարած ևն . . . մառանը եմիշով, կախանով, տանձ ու խնձորով խլթխլթում ու մոնողին հոտը տեղն ու տեղը բռնում շշմացնում էր։ Նրա հարսն ու փեսէն կամ մէկ ազիզ զոնադ, որ գլուխը բարձին չէր դնում էս անմահական բարութեան մէջը, Էնպէս իմանում էր, թէ դրախտում ա աչքը խփում կամ բաց անում։ Որը երկու, որը երեք բաղ ունէր, նոքար, հօտադ գռանը հազիր, ու տան ներսն ու պուճախը դրսմբում էր։ Կարասներով կողակ, կճճներով պանիր ու դաւուրմա, աքաշներով զոխ, բոխ, ողորմակոթ, բղլզներով եղ ու կարաք, մոթալներով պանիր. — Ծնկ, ի՞նչ տուն։ Տաօք զոնադ որ էն սհաթը նրա գռանը վեր գային, սաղ ամիս ուտէին, խմէին ևն . . . նրա տան խէջն ու բարաքեաթը հա կար, հա կար։ . . . Մէկ փարի բան բաղարիցը տուն չէր գտ, բացի իրենց հագնելու շորիցը, Էն էլ կտաւ, շտպկացու, չուխացու, շատը հարսներն ու աղջկերքն էին նրանց համար մանում, գործում, կարում։ Նրանց կնանոնցը որ մտիկ տայիր, ինչըդ կերթար, խաս ու զումաշի միջում կորած էին . . . Մէկը մէկի ջգրու շատ անգամ իրանց օղլուշաղին Էնպէս էին ծաղկում։ զարդարում, ինչպէս զարնան վարդը . . . Շատը շորս հինգ հարսն ունէր տանը, որ մէկ տեղը ցաւելիս ուզում էին գլխովը պտիտ դան ու ոտները կում անեն խմեն։ . . . Մէկ բան ուզելիո՞ ոտի տեղ զլիսի վրայ էին զնում, որ նրա ասածն անեն ու ձեռքները դոշըներին դրած աչքը կթած ունէին, որ տեսնեն թէ իրանց տէրը կամ զոնադը ինչ կհրամայի, որ կատարեն։ Կեսուրը կամ կեսառը մէկ աչքը քցելիս ուզում էին տեղն ու տեղը հալչեն, էնքան հնազանդ էին։*)

*) «Վերը Հայաստանի», եր. 54—56.

Գիւղական կեանքի այսպիսի պատկերացմանը չէր յաջորդել քաղաքային կեանքի փառաբանութիւնը։ Եւ երբ Արովեանը գիւղական կեանքի այսպիսի ջատագովումից անմիջապէս յետոյ նկարագրում է գիւղացու բերանով քաղաքի կեանքի բացասական կրզմերը, իսկոյն զգացուում է, որ հեղինակը խրախուսում ու ծափահարում է իւր հերոսին։ Ուրիշ ամեն գէպքերում վէպը ընդհատող ու դատողութիւններ տուող Արովեանը այս գէպքում լուռ է մնում բոլորովին ու գրանով ցոյց տալիս, որ լուռթեան պատճառը համաձայնութիւնն է։ Ասածներս հաստատուում են մի ուրիշ կէտով էլ։

Վերեւում մենք բերել էինք գիւղացու խոհերից մէկը։ «Հմիկ կովը վեր են քաշում, որ տեսնեն թէ տակին եարաք ֆորթ կայ, թէ չէ»։ Արովեանը վէպի մէջ մի տեղ նկարագրելով, թէ «գդալ, չանգալ դանակի ոտը գեռ մեր աշխարքը չի մտել, կերակուրներն էլ մէկ սինով են ներս բերում, հացից ետը էլի ջրով որ ձեռք ու բերան չողողեն, շուանափն, կերածը հարամ կըլի, գդակ վերցնել սեղանի վրայ, եա գլուխ տալ ադաթ չի», — աւելացնում է։ «Երկրի ծէսն էսպէս ա, նւրուղա չի, որ կովը վեր քաշեն, տեսնեն տակին ֆորթ կայ, թէ չէ»^{*)}։ Ընթերցողը ինքն էլ տեսնում է. որ «գդակ չվերցնելու», «երկրի ադաթի» համար «Եւրոպայի կով վեր քաշելն ու ֆորթ փնտուելը» մատնանշելը տեղին չէ. Արովեանի այդ յաւելուածը մի զուարճալի անկապակցութիւն է։

Բայց այդ յաւելուածը մեզ համար շատ նշանակալից է, որովհետեւ ցոյց է տալիս, որ ինքը Արովեանն էլ անբաւական է այն կարգերից, «որտեղ կովը մնր են քաշում, տեսնեն՝ տակին ֆորթ կայ թէ չէ»։

Դառնացած գիւղացին ոյս բառերով բնորոշում է իւր երկրի քաղաքի մարդկանց, քաղաքի, որտեղ զարդանալ է սկսում փողային տնտեսութիւնը։

Դժգոհ Արովեանը նոյն բառերով մատնացոյց է լի-

^{*)} «Վերը Հայաստանի» եր. 34—35.

Նում՝ առևտրական ու արդիւնաբերող եւրոպայի շահասէր ձգտումների վերայց:

Քանաքեռոցի վիպասանը և Քանաքեռի քեթխուդան միւնպին աշխարհահայեցքի ներկայացուցիչներ են:

Վէպի մէջ գիւղացու բերանով խօսում է Արովեանը, իսկ գրականութեան մէջ յանձին Արովեանի խօսում է գիւղացին:

Մի քանի խօսք էլ վիպասանի վերաբերմանը մասին դէպի հոգեսրականութիւնը: Մենք միշտ գիտմամբ շեշտում ենք — դէպի հոգեսրականութիւնը: Արովհետեւ ինչպէս զիւղացին, այնպէս էլ Արովեանը, եկեղեցու դէմշն, այլ ժամանակակից եկեղեցականների:

«Մէկ ազգը պահողը լեզուն առ հաւատը, թէ սրանց էլ կարցնենք, վայն եկել առ մեր հալին»*) — դատում է նա: Մի ուրիշ տեղ:

«Որ ջան անինք, մէկ դմէկու սիրենք, մեր լեզուն, մեր եկեղեցին էնպէս զայիմ բռնենք, ինչպէս մեր երջանիկ նախնիքը, հաւատացիր ինձ, Աստուած էլ կսիրի մեզ, մարդու էլ»:**)

Տեսանք, թէ հեղինակը ինչ համոկրութեամբ էր վերաբերուում՝ գիւղացիներին, նրանց տնտեսութեանը, ընտանիքին, բայց հէնց որ խօսքը փօխուում է գիւղացու տգիտութեան, անկրթութեան մասին, ահա ինչ լեզու է դորժածում նա:

Աշ գեղըցի ըլելով, գլուխը հաստ, ծուծը՝ բարակ, անտաշ, կոպիտ, ոչ վարպետ էր տեսել, ոչ վարժատուն, ձիու տակը սրբելուցը, մաճը բռնելուցը, հանդը վարելուցը ու կատեպանութիւնից աւելի ոչինչ բան չէր գիտում: . . . Թէկուզ գեղըցին: թէկուզ եաբանի հայուանը, մի հետաբ առ»***)

Լուսաւորել այդ գիւղացուն — ահա Արովեանի պա-

*) Նոյնը, Յառաջաբան, եր. ԺՈ.

**) «Վերը Հայաստանի եր. 95.

***) Նոյնը, եր. 26.

հանջը հոգեօրականութիւնից, Խօսելով գիւղացի տղէտքահանաների մասին՝ նկատում է.

«Ամենքս էլ չաւ գիտենք, թէ ում մեղքն ա. ամահիմիկ խօսալու վախտը չի, եղոյ կասեմ, ինչ ասեմ, իմացողն իմացաւ ու ականջի տակն էլ բարքի թէ քորեց...» *)
Իսկ յետոյ շատ ու շատ պարզ ասում է.

«Ամեն մեշրդի հայաժում գեղ տեղարենքն էլ մէկ մեծ վարժատուն կայ, որտեղ երկու երեք լեզու են սովորում. մեր եկեղեցը բանց հայաթներումը լազլագն էլ բուն չի գնիլ. բայ ինչ կը լի, որ ազգի սիրոն էլ քիչ-քիչ չի հովանալ» **)

XI.

Ի՞նչ հետեւանքների հասանք այս գրական-պատմական վերլուծութեան ժամանակ:

Տեսանք նախ, որ 19-րդ դարի առաջին տասնամեականերում տնտեսութեան գրութիւնն ու հասարակական խմբերի որոշ դասաւորութիւնը պատճառ դարձան գիւղացիական գրականութեան հիմքը գնելուն. երկրորդ, որ տնտեսութեան եղանակների ընդհարումը և սոցիալական տարրերի յարաբերութիւնները գիւղացիական աշխարհայեցքին տուել էին յայտնի կերպարանք և երրորդ, որ Աքովեանը այդ շրջանի զուտ գիւղացիական աշխարհայեցքին ներկայացուցիչն էր» ***)

Այս հետեւանքները անակընկալներ են մեր գլուկանութիւնն ուսումնասիրողների համար, այս անակնկալները

*) Նոյնը, եր. 20.

**) Նոյնը, եր. 96.

***) Երոպական դրույներից աշխարհակայեցքով ամենից աւելի մօտ է Աբովյանին Թուսաօն, որ կողմնակից է փոքր հողային սեփականութեան, գիրազանց է համարում իր համար արտադրազ եւ սպառող փակ տնային տնտեսութեանը, ջատագով է նահապետական ընտանիքին ու կարգերին եւ հակառակ է բազարային կեանքին, վաճառականութեան ու արդիւնարերութեան գարգացմանը: Հմտ(Проф. Р. Виппер. «Общественные и ученія и историческія теоріи XVIII и XIX в. в.» Москва, 1908. յակապէս եր. 72—78.

պլարտական ենք մի յայտնի մեթոդի, որ գրական երևոյթաների պատճառը տնտեսական-սոցիալական երևոյթների մէջ է որոնում։ Այդ մեթոդը մինչև այժմ չէ գործադրուել մեղանում, սակայն «վէմը», որ անարգեցին շինողները, նա կլինի գլուխ անկեան։

Մի քանի խօսք էլ, և վերջացնենք։ Մինչեւ այժմ մեղանում անթիւ են այն մարդիկ, որոնք սոցիալական տարրերի մրցումը յատուկ են համարում՝ Եւրոպային, այլ ոչ մեր հասարակութեանը։ Նրանց յատկապէս սխալացնում է այն, որ մեր նոր պատմութիւնը հասարակական խմբերի քաղաքական ընդհարումներ չէ յիշատակում։ Սակայն այս փաստ չէ, Քաղաքական անկախութեան բացայացութիւնը թոյլ չէ տուել, որ մեր հասարակական տարրերի մրցումը քաղաքական ընդհարումն կերպարանք ստանայ։ Բայց միթէ այդ նշան է, որ քաղաքական ընդհարումների հիմքը, այն է՝ տնտեսական ու սոցիալական մրցումը նոյնպէս բացակայում է։ Երբ գետը կատաղի յորձանքներ չունի, միթէ այս ցոյց է տալիս, որ նա չէ հոսում։ Հենց մի գեղարուեստական երկի վերլուծումը, Արովեանի վէպինը, երեան է հանում, որ մեր հասարակական կեանքում էլ գոյութիւն է ունեցել տնտեսութեան տարրեր եղանակների ու սոցիալական խմբերի կռիւը։ Այդ կռիւը, դասակարգային մրցումն անցել է գրականութեան մէջ։

Արովեան իդէոլոգ է և, ինչպէս իւր սոցիալական խումբը, կռիւ է մզում երկու ֆրոնտի վերայ։ Որչափոք որ վիպասանը կռուում է աջ թերի վերայ, քննադատում է հին կարգերը, այն չափով նա առաջադիմական է, իսկ որչափ որ սուր է շողացնում՝ դէպի ձախ, դէպի նոր կարգերը—դէպի փողային տնտեսութիւնն ու վաճառականութիւնը,—այն չափով էլ յետադիմական է։